

համաձայն, Գողգոթայի ապառաժին ճեղքուածքէն մեր Տիրոջ աստուածային արեան կաթիլը վազած է Յիսուսի խաչին տակ թաղուած մեր նախահօր Ադամի գանկին վրայ, անով լուալու համար անոր մեղքերը: Ուրիշ ժողովրդային ականդութեան մը համաձայն, եթէ ո՛ր և է ուխտաւոր կը փափաքի միշտ թարմ հաց ունենալ, երկիւղածութեամբ մը նոյն ճեղքուածքին մէջ կը գնէ հացը որ բոլոր ուխտաւորութեան միջոցին պիտի կրնայ պահել իր թարմութիւնը եւ իր առաջին համը, ինչպէս կը պատմէ Փելլիքս Ֆապրի 1480ին կատարած իր ուխտագնացութեան մէջ:

Ժ. ՊԱՏԱՆԱՏԵՂԻՆ ԵՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐԵԱՆ ՄԱՍՈՒՆՔԸ

Յովհաննու Աւետարանին համաձայն (ԺԹ.), Յովսէփ Արիմաթացին Պիղատոսէն թոյլտուութիւն առնելով՝ Յիսուսի մարմինը ստացաւ, Նիկողեմոսն ալ միացաւ անոր եւ երկուքը միատեղ հրէական սովորութեան համաձայն, պատանքեցին Յիսուսի մարմինը խունկով և անուշ իւղերով: Այն քարը որուն վրայ օծեցին Անոր մարմինը ծածկուած է կարմիր մարմարով մը: Այս տեղը կը կոչուի Պատանատեղի եւ կը գտնուի Ս. Յարութեան Տաճարին մէջ Գողգոթայէն իջնելու ժամանակ անմիջապէս դէպի ձախ կողմ եւ կը վերաբերի հայոց, յունաց եւ լատինաց: Ի հնումն այս տեղը զարգարուած էր մոզայիքով. 1573ին, Rauwolfs կը գրէ թէ Պատանատեղին «լայն եւ նուրբ մարմար մ'էր, երկաթէ վանդակով մը շրջանակուած» (P. E. F. 1909, էջ 293):

Խաչակիրներէն առաջ, Պատանատեղիին վրայ շինուած էր մատուռ մը, յանուն Ս. Կուսին: Այս մատուռը քանդուեցաւ երբ Ս. Յարութեան Տաճարին